ԳԵՆԴԵՐԻ ՎԵՐԱՀԱՍՏԱՏՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ԻՐԱՎԱԿԱՐԳԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ ԲԱՑԵՐ.

Գենդերի հաստատման վիրահատական միջամտությունները անհրաժեշտ բժշկական գործընթացներ են, որոնք ուղղված են համապատասխանեցնելու մարդու մարմինը իր գենդերային ինքնությանը: Հորմոնային թերապիան, որը հանդիսանում է ֆիզիոլոգիական նախապատրաստության փուլ, նախորդում է գենդերի վերահաստատման գործընթացին բնորոշ վիրաբուժական միջամտություններին, և որի ընթացքում հորմոնների ազդեցությամբ կարող է դիտվել առողջական վիճակի փոփոխություն, պահանջում է առողջական վիճակի ընթացիկ գնահատում և վերահսկում: Վիրահատությունից առաջ և հետո պետք է համագործակցել վիրաբույժների հետ և տրամադրել մանրամասն խորհրդատվություն վիրահատական տարբերակների՝ ինչպես ցուցման, այնպես էլ հակացուցման վերաբերյալ:

Գործնականում կիրառվող սխեմաները ձևավորվել են ինչպես ոլորտում աշխատող մասնագետների հետ անհատական կապերի, այնպես էլ արդեն փորձ ունեցող տրանս անձանց փորձի փոխանակման ընթացքում: Հաճախ այդ պրակտիկաներն անցնում են բժշկական հաստատություններում ոչ ֆորմալ ուղիներով՝ հիմնվելով բժշկական ոլորտում աշխատողների անձնական մոտեցումների և «աշխատող» մեխանիզմների վրա:

Առողջապահական համակարգն առհասարակ շարունակում է գործել առանց հստակ ուղղորդվածության և ներառական քաղաքականության: Չնայած վիրաբուժական ծառայությունների հասանելիության և մասնագիտական կարողությունների զարգացմանը, հորմոնաթերապիայի և էնդոկրին համակարգի փոփոխությունների հետ կապված ռիսկերը դեռ առկա են: Պատրաստված էնդոկրինոլոգ մասնագետների և գենդերի վերահաստատման գործընթացի կարգավորումների բացը հաճախ հանգեցնում է հորմոնաթերապիայի ընթացքում առողջական բարդությունների՝ վերահսկողության և մասնագիտական ուղեցույցների բացակայության պայմաններում: Գենդերի վերահաստատման գործընթացի հորմոնային դեղամիջոցների ընդունման փուլում անհրաժեշտ է պարբերաբար անցնել բժշկական հետազոտություններ՝ թերապիայի արդյունավետությունն ապահովելու, ինչպես նաև առողջական հնարավոր ռիսկերից ու դեղորայքի կողմնակի ազդեցությունից խուսափելու համար: Սակայն Հայաստանի պայմաններում այս պրակտիկան գրեթե կիրառելի չէ տրանս անձանց շրջանում: Միևնույն ժամանակ, իրավակարգավորումների բացը համապատասխան պրակտիկայի առկայության պայմաններում պարունակում է կոռուպցիոն ռիսկեր: Համաձայն Առողջապահության համաշխարհային կազմակերպության (ԱՀԿ) և Յոգյակարտայի սկզբունքների՝ գենդերի վերահաստատման ծառայությունները պետք է լինեն մատչելի, անվտանգ, հարգալից և իրավականորեն ապահովված:

Առաջարկում ենք իրականացնել իրավական ակտերի հետևյալ լրացումները.

- ՀՀ կառավարության կողմից հաստատված Բժշկական օգնության և սպասարկման տեսակների ցանկում ներառել գենդերի հաստատման վիրահատությունը՝ որպես բժշկական օգնության և ծառայության տեսակ:
- Առողջապահության նախարարի նորմատիվ հրամանով հաստատել գենդերի հաստատման գործընթացի կարգը՝ հիմք ընդունելով միջազգային ընդունված չափանիշները, այդ թվում՝ հորմոնալ թերապիայի, նախավիրահատական, վիրահատական, հետվիրահատական միջամտությունների, խորհրդատվությունների և խնամքի վերաբերյալ: